

«Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագիր

Փոքր դրամաշնորհների հայտի ձև

<p><i>Ծրագրի անվանումը</i></p>	<p>Կոռուպցիայի բացառումն առողջապահության ոլորտում, և դրան նպաստող անհրաժեշտ քայլերը:</p>
<p><i>Կոնտակտային անձ և կոնտակտային տվյալներ</i></p>	<p>Խաչատրյան Նարինե 094853458 narinexachatryan@mail.ru</p>
<p><i>Ծրագրի իրականացման վայրը (մարզ, համայնք)</i></p>	<p>Լոռու մարզ, Վանաձոր</p>
<p><i>Ծրագրի տևողությունը</i></p>	<p>3 ամիս</p>
<p><i>Ծրագրի հակիրճ նկարագրիչը</i></p>	<p>Մեր ծրագրի նպատակն է պայքարել կոռուպցիայի դեմ՝ հնարավորինս բացառելու կոռուպցիան Վանաձորի հիվանդանոցային համալիրի երկու՝ ծննդոգնության և մանկական բաժանմունքներում: Նպատակին հասնելու համար նախատեսվում են կատարել մշտադիտարկումներ(մոնիթորինգներ), սոցիոլոգիական հարցումներ, բաժանմունքներում մատուցվող ծառայությունների թափանցիկության ապահովում, հասարակության իրազեկման բարձրացում, հասարակական կարծիքի վեր հանում և վերլուծում, իրավիճակի ընդհանուր պատկերի պարզաբանում, փաստերի արձանագրում, հասարակական կարծիքների վերլուծություն, հասարակական երկխոսության:</p>

Արդյունքները ,հեռուստաձրագրերի միջոցով, կներկայացվեն հանրությանը և համապատասխան պետական մարմինների հետ եթերում կքննարկվեն:Վերջնական արդյունքում կմշակվի առաջարկությունների փաթեթ և այն կներկայացվի պետական համապատասխան մարմիններին: Նպատակին հասնելու համար նախատեսվում են հետևյալ քայլերը: 1.Մոնիթորինգներ Վանաձորի հիվանդանոցային համալիրի երկու ծննդօգնության և մանկական բաժանմունքներում(4անգամ): 2.Սոցիոլոգիական հարցումներ (հարցաթերթիկների և լրագրողական հարցումների միջոցով) 3.Սեմինարներ: 4.ՄԻԳ հեռուստաառադիոընկերության կողմից հեռուստաբանավեճ, հասարակական երկխոսություն: 5.ՄԻԳ հեռուստաառադիոընկերության կողմից <<Ձայն բազմաց>> հեռուստառեպորտաժ: 5.Շնորհանդես հեռուստաեթերում կլոր սեղանի շուրջ: 6.Հարցաթերթիկների (300 հարցաթերթիկ) և հարցումների սոցիոլոգիական վերլուծություն , փաստերի արձանագրում ,առաջարկությունների և արդյունքների փաթեթի պատրաստում և համապատասխան պետական մարմիններին առաջարկությունների փաթեթի ներկայացում:

Ծրագրի ընթացքում մենք համագործակցելու ենք Լոռու մարզի աչքի ընկած և հասարակության մեջ մեծ համբավ վայելող հեռուստաառադիոընկերության՝ ՄԻԳ

	<i>հեռուստառադիոընկերության հետ:</i>
<i>Ծրագրի բյուջեն (նշել դրամով)</i>	Ընդհանուր բյուջեն՝ 1.640.200 դրամ Ներդրում՝ 691.000 դրամ ՀԵԻԱ-ից ակնկալվող գումար 949.200 դրամ
<i>Ծրագրի կազմակերպությունը (եթե առկա է)</i>	<<Լոռու ՄԻԳ >> ՍՊԸ /ՄԻԳ ՀՌԸ/

Դիմող կազմակերպության/նների նկարագրություն (առավելագույնը կես էջ)

<<Լրագրողների <<Սելեն>>ակումբ>>հկ-ն հիմնադրվել է 06.10.2003 թվականին: Կազմակերպության գործունեության նպատակները տարբեր են՝ հիմնականում 1.Հկ-ն նպաստում է խոսքի, տեղեկատվության, մամուլի, արտահայտման ազատությանը 2.Ասուլիսների, բանավեճերի, դեբատների,հարցազրույցների կազմակերպում և իրականացում 3.Նպաստում է լրատվամիջոցների, հասարակական – քաղաքական , հասարակական կազմակերպությունների, իշխանությունների,նրանց ներկայացուցիչների աշխատանքի որակի, վարկանիշների , հասարակական տրամադրությունների դիտարկումների, ուսումնասիրությունների,վերլուծությունների իրականացմանը: 4.Կազմակերպել մարզամշակույթային, էկոլոգիային վերաբերվող գործառույթներ,շարժումներ: 5.Հասարակության բոլոր խավերի սոցիալական հարցումների և հետազոտությունների իրականացում :

<<Լրագրողների<<Սելեն>>ակումբ>> հկ-ն իր գործունեության ընթացքում իրականացրել է մի շարք ծրագրեր.1 Հակաձխախոտային՝ <<Մի գնիր քո մահը>>, 2007թ.,<<Հասարակական երկխոսության և զարգացումների կենտրոն>>հկ-ի հետ համատեղ 2. ՄԻԳ հեռուստառադիոընկերության և OSIAF –ի կողմից իրականացվող <<Կանայք և երիտասարդները քաղաքական կյանքում>> ծրագրի շրջանակում մոնիտորինգ է իրականացրել , 2007թ: 3. ՄԻԳ հեռուստառադիոընկերության և UNESCO-ի կողմից իրականացվող <<TV կամուրջ>> ծրագրի շրջանակում մոնիտորինգ է իրականացրել ,2008-2009թ: 4. ՄԻԳ հեռուստառադիոընկերության և ԱՄՆ դեսպանատուն Հայաստան-ի կողմից <<Տեղական կապ>>> ծրագրի շրջանակում մոնիտորինգ է իրականացրել2008-2009թ: 5.ՀՀ նախագահի աշխատակազմի գործընկեր կազմակերպության՝ Հայաստանի երիտասարդական հիմնադրամի կողմից հայտարարված մրցույթը հաջողությամբ շահել և

իրականացրել է «<Լոռու մարզում Էկոտուրիզմի զարգացման հնարավորությունները, հեռանկարները և դրանց նպաստող քայլերը>> ծրագիրը, 2014թ: Ծրագրերը միշտ կատարվել են բարեխղճորեն , ժամկետների մեջ, ըստ ծրագրին ներկայացված պահանջների:ՀԿ-ն ունի իր գրասենյակը,իրավաբանական հասցեն և հաշվեհամարը:

Ծրագրի նկարագրություն (առավելագույնը երկու էջ)

(Խնդրում ենք ներկայացնել խնդրի համառոտ վերլուծությունը, նկարագրել ծրագրի նպատակները և ինչպե՞ս էք նախատեսում հասնել այդ նպատակներին: Նշեք, ովքե՞ր են ծրագրի ուղղակի և անուղղակի շահառուները, ինչ մեթոդաբանություն է կիրառվելու, և որո՞նք են ակնկալվող արդյունքները և ազդեցությունը)

Կոռուպցիան այսօր դարձել է ոչ միայն ազգային այլ նաև միջազգային հիմնախնդիր: Այդ պատճառով մարդիկ ջանքեր են թափում երևույթը հետազոտելու և վերացնելու համար:Կոռուպցիայի շնորհիվ խարխլվում են պետության հիմքերը, կորչում է վստահությունը պետության հանդեպ, ընկնում է հանրային ծառայությունների որակը,մարդն օտարվում է պետությունից: Կոռուպցիան փոշիացնում է պետության միջոցները , արհեստականորեն բարձրանում են պետպատվերի գները:Սակայն կոռուպցիան առավել վտանգավոր է առողջապահության ոլորտում :Մարդը դառնում է անօգնական և անպաշտպան , երբ հիվանդ է ,երբ նրա կյանքին վտանգ է սպառնում :Հետևաբար կարևոր է ,որպեսզի առողջապահության ոլորտը որքան հնարավոր է զերծ լինի կոռուպցիոն երևույթներից : Դեռևս հնուց բժշկության ոլորտը համարվել է ամենազնիվ, ամենաառաքինի, ամենամարդասիրական մասնագիտությունը: Մեր ծրագրի նպատակն է պայքարել ` հնարավորինս բացառելու կոռուպցիան Վանաձորի հիվանդանոցային համալիրի երկու ` ծննդօգնության և մանկական բաժանմունքներում ` մշտադիտարկումների,սոցիոլոգիական հարցումների վերլուծության,մարդկանց մոտ իրազեկության բարձրացման , հասարակական երկխոսության, հեռուստածրագրերի միջոցով: Ծրագրի ընթացքում մենք համագործակցելու ենք Լոռու մարզի աչքի ընկած և հասարակության մեջ մեծ համբավ վայելող հեռուստատաղիորնկերության ` ՄԻԳ հեռուստատաղիորնկերության հետ: Նպատակին հասնելու համար նախատեսվում են հետևյալ քայլերը.

1.Մոնիտորինգներ—հիվանդանոցային համալիրի գործունեության ճիշտ պատկերը երևան հանելու , առկա խնդիրները բարձրաձայնելու , մատուցվող

ճառայությունների որակը պարզելու համար նախատեսվում է անցկացնել մշտադիտարկումներ հիվանդանոցային համալիրի երկու՝ ծննդոգնության և մանկական բաժանմունքներում՝ հարցազրույցների, նկարահանումների, ուսումնասիրությունների միջոցով՝ ծրագրի ղեկավարի, լրագրողների, ԶԼՄ ներկայացուցիչների հետ համատեղ՝ անմիջական նկարահանումների միջոցով:

2.Սոցիոլոգիական ուսումնասիրություններ (հարցաթերթիկների և լրագրողական հարցումների միջոցով) — հիվանդանոցային համալիրի գործունեության վերլուծության, առկա խնդիրները բարձրաձայնելու, վեր հանելու, հասարակական կարծիքը լսելու համար նախատեսվում է ծրագրի շրջանակներում անցկացնել իրավիճակի վերլուծություն – այդ նպատակով կատարասվեն հարցաթերթիկներ (հարցաթերթիկներն ըստ բովանդակության կլինեն երեք բնույթի՝ նախատեսված ծննդոգնության բաժանմունքի գործունեության հետազոտությանը(կլրացվեն բաժանմունքի հիվանդների կողմից), մանկական բաժանմունքի գործունեության սոց կարծիքների հետազոտությանը(կլրացվեն բաժանմունքի հիվանդ երեխաների ծնողների կողմից), մասնագետների՝ բուժսպասարկման կազմի կարծիքների հետազոտությանը (կլրացվեն հիվանդանոցային համալիրի բուժանձնակազմի կողմից): Հարցաթերթիկներ կլրացվեն նաև Վանաձոր քաղաքի բնակիչների կողմից՝ կամավորների մասնակցությամբ, տարբեր թաղամասերում, տարբեր սոցիալական շերտերի ներկայացուցիչների կողմից: Կատարվեն նաև լրագրողական հարցումներ: Հարցաթերթիկներ կլրացվեն նաև սեմինարի մասնակիցների կողմից(80 մասնակցի): Հարցաթերթիկների մշակմանն ու պատրաստման աշխատանքները կիրականացնի մարզում վերջին քսան տարում սոցիոլոգիական հարցումների հայտնի մասնագետ, սոցիոլոգ և տնտեսագետ, նախկին վիճվարչության պետ Անահիտ Մաթևոսյանը: Թղթերին կից ներկայացված է նրա կենսագրականը: Հետագայում կկատարվեն նաև լրացված հարցաթերթիկների սոցիոլոգիական վերլուծություն, ամփոփում ապա հեռուստաթերթի միջոցով արդյունքները կներկայացվի հանրությանը: Հետագայում նաև կկազմվի առաջարկությունների փաթեթ, որը կներկայացվի համապատասխան պետական մարմիններին:

3.Սեմինարներ: Սեմինարները նախատեսվում են անցկացնել այնպիսի մասնակիցների հետ (շահառուներ), որոնք կրթվելով և իրազեկվելով հետագայում իրենք կդառնան ինֆորմացիայի և տեղեկատվության տարածողներ(ուսանողներ, հկ անդամներ, ուսուցիչներ և այլն): Դրանով կապահովենք ավելի շատ կիրթ, իրազեկված ու տեղեկացված քաղաքացիներ: Սեմինարները հատուկ ռեպորտաժի ձևով կհեռարձակվեն հեռուստատեսությամբ՝ 10 րոպե տևողությամբ՝

ավելի մեծ լսարան ընդգրկելու համար: Նախատեսվում է թվով 4 սեմինար՝ յուրաքանչյուր սեմինարին 20 մասնակից՝ ընդամենը սեմինարների ընթացքում 80 մարդ կիրազեկվի, կտեղեկանա իր իրավունքներին, պետության կողմից իրեն ընձեռնված հնարավորություններին, ինչպես նաև թե ինչպես խուսափել կոռուպցիայի բաղադրատարր դառնալուց: Սեմինարները լուսաբանող ռեպորտաժներն էլ կապահովեն ավելի մեծ իրազեկված լսարան: Սեմինարները կանցկացվեն Հայաստանի երիտասարդ իրավաբանների գրասենյակում: Յուրաքանչյուր սեմինարը կտևի 3 ժամ (նաև կես ժամ ընդմիջում՝ 3.5 ժամ): Սեմինարների ընթացքում Վանաձորի բժշկական համալիրի բժիշկ փորձագետ Դավիթ Շահվերդյանը (6 ժամ) և իրավաբան փորձագետ Արթուր Հարությունյանը (6 ժ) մասնակիցներին կծանոթացնեն առողջապահական համակարգում տեղի ունեցած և սպասվելիք փոփոխություններին, ինչպես ճիշտ օգտվել բուժսպասարկման անվճար և վճարովի ծառայություններից, առողջապահության ոլորտում տեղի ունեցած իրավական փոփոխություններին, միջազգային փաստաթղթերին, որոնք ստորագրել է ՀՀ-ն, ինչպես նաև ինչպես զերծ մնալ կոռուպցիայի բաղադրատարր դառնալուց (պատասխանատու՝ ծրագրի ղեկավար Նարինե Խաչատրյան, բժիշկ փորձագետ Դավիթ Շահվերդյան, իրավաբան փորձագետ Արթուր Հարությունյան):

6. Հեռուստաբանավեճ հեռուստահաղորդում, հասարակական երկխոսություն եթերում (ՄԻԳ հեռուստառադիոընկերության կողմից), միաժամանակյա ձայնի սինխրոն հեռարձակմամբ ՄԻԳ ռադիոյով՝ անավել մեծ լսարան ընդգրկելու համար (լրագրող Նարինե Մաթևոսյան և պատասխանատու՝ ՄԻԳ հեռուստառադիոընկերության տնօրեն Սամվել Հարությունյան):

7. Հատուկ ռեպորտաժ «Ձայն բազմաց» ձևաչափով: Քաղաքացիները ծրագրի բնույթին և բովանդակությանը համահունչ հարցեր են ուղղում եթերի մասնակիցներին: Հարցադրումները կատարվում են Վանաձոր քաղաքի տարբեր թաղամասերում, տարբեր սոցիալական ներկայացուցիչների հետ: Հաղորդման ընթացքում պատրաստված հասարակական հարցադրումները ներկայացվում է եթերում, այն դիտում են նաև հաղորդման մասնակիցները՝ Լոռու մարզային տեսչության պետ Վարդան Աբովյանը, Լոռու մարզպետարանի առողջության և սոցիալական ապահովության վարչության պետ Սամվել Լամբարյանը, բժիշկներ: Դիտումից անմիջապես հետո բոլոր հնչեցրած հարցերին մասնակիցների կողմից կտրվեն հնարավորինս սպառիչ պատասխաններ (պատասխանատու՝ ՄԻԳ հեռուստառադիոընկերության տնօրեն՝ Ս. Հարությունյան, լրագրող՝ Ն. Մաթևոսյան, ծրագրի ղեկավար Ն. Խաչատրյան):

8.Շնորհանդես ՄԻԳ հեռուստատաղիորնկերության եթերում , կլոր սեղանի շուրջ: Հրավիրված կլինեն առողջապահության ոլորտի տարբեր ներկայացուցիչներ, Վանաձորի հիվանդանոցային համալիրի տնօրենը, բժիշկներ, որոնք ծրագրի ընթացքում օգնել և համագործակցել են : Եթերի ընթացքում կքննարկվեն ուսումնասիրությունների արդյունքները, կկազմվի առաջարկությունների փաթեթ՝ պետական համապատասխան մարմիններին ներկայացնելու առաջարկության ձևով:Վերջում մասնակիցներին կտրվեն շնորհակալագրեր:

Ծրագրի իրականացումը կկազմակերպվի էլնելով ՀԿ կառուցվածքից: Ծրագրի պատասխանատուն «Լրագրողների «Սելեն» ակումբ» ՀԿ-ի նախագահն է՝ Ն. Խաչատրյանը, որն էլ կստանան հիմնական ծրագրի ղեկավարի պարտականությունները, կկազմակերպի ուղիղ եթերների, ասուլիսների, քննարկումների, բանավեճերի անցկացումը: Իրավաբան-փորձագետ Ա. Հարությունյանը պատասխանատու կլինի օրենքի վերլուծությունների հիման վրա բրոշյուրի պատրաստման և տպագրման համար: Ծրագրի ղեկավար՝ Ն. Խաչատրյանը, Միգ հեռուստատաղիորնկերության տնօրեն՝ Ս. Հարությունյանը, լրագրող՝ Ն. Մաթևոսյանը, պատասխանատու կլինեն հեռուստատաղիորներների, կլոր սեղանների, ասուլիսների թեմաների, հատուկ ռեպորտաժների պատրաստման և եթեր հեռարձակման, ՋԼՄ-ների մշտական կապի ապահովման համար: Հաշվապահ՝ Ս. Հարությունյանը, կապահովի ՀՀ հարկային օրենսդրության նորմերին համապատասխան ֆինանսական միջոցների բաշխումը, մատյանների կազմումը և այլն: Համակարգող՝ Կ. Պապիկյանը, կկատարի գործավարությունը, կպատասխանի հեռախոսագանգերին և պատասխանատու կլինի կազմակերպվող միջոցառումների հրավերների կազմման և ցրման համար: Ծրագրի ընթացքում կապահովվի աշխատանքային հարաբերությունների նշված ձևերը և կարգը, և յուրաքանչյուրը պատասխանատու կլինի ծրագրի ղեկավարին ծրագրի շրջանակներում ստացած իր հանձնարարությունների մասով: Ծրագրի հետ կապված գնումներն իրականացվելու են առնվազն երեք այլընտրանքային առաջարկներից՝ նվազագույն գների, առավելագույն որակի, երաշխիքային սպասարկման ժամկետի, վաճառող հիմնարկի հեղինակության սկզբունքներով:

Ժամանակացույց

(Խնդրում ենք ներկայացնել ծրագրի ժամանակացույցը՝ հետևելով առաջարկվող աղյուսակին: Անհրաժեշտության դեպքում կարող եք ավելացնել լրացուցիչ տողեր:

Շաբաթ	Գործողություն
1-ին	Սկսել մոնիթորինգ ծննդօգնության բաժանմունքում (ուսումնասիրություններ, հարցազրույցներ, լրագրողական

	<p>հարցումներ, նկարահանումներ)</p> <p>Հարցաթերթիկների պատրաստում:</p>
2-րդ	<p>Սկսել մոնիթորինգ հիվանդանոցային համալիրի մանկական բաժանմունքում (ուսումնասիրություններ, հարցազրույցներ, լրագրողական հարցումներ, նկարահանումներ):</p>
3-րդ	<p>Հարցաթերթիկների լրացում :</p> <p>Շարունակել մոնիթորինգը ծննդոգնության բաժանմունքում:</p>
4-րդ	<p>Հեռուստաբանավեճի նախապատրաստում և ցուցադրում:</p> <p>Լրացված հարցաթերթիկների սոցիոլոգիական վերլուծություն:</p>
5-րդ	<p>Առաջին սեմինար:</p> <p>Առաջին սեմինարի բովանդակակալից լուսաբանում հեռուստաթերով:</p> <p>Շարունակել մոնիթորինգը հիվանդանոցի մանկական բաժանմունքում:</p> <p>Լրացված հարցաթերթիկների սոցիոլոգիական վերլուծություն:</p>
6-րդ	<p><<Ձայն բազմաց>> հեռուստառեպորտաժի նախապատրաստություն՝ լրագրողական հարցումներ տարբեր թաղամասերում , տարբեր սոցշերտերի ներկայացուցիչների հետ</p>
7-րդ	<p>2-րդ սեմինար:</p> <p>Երկրորդ սեմինարի բովանդակակալից լուսաբանում հեռուստաթերով:</p>
8-րդ	<p>Հարցաթերթիկների արդյունքների ամբողջական վերլուծություն:</p>
9-րդ	<p><<Ձայն բազմաց>> հեռուստառեպորտաժի ցուցադրություն:</p> <p>3-րդ սեմինար:</p> <p>Երրորդ սեմինարի բովանդակակալից լուսաբանում հեռուստաթերով:</p>

10-րդ	Առաջարկությունների փաթեթի մշակում:
11-րդ	4-րդ սեմինար Չորրորդ սեմինարի բովանդակակալից լուսաբանում հեռուստաեթերով:
12-րդ	Շնորհանդես հեռուստաեթերում` Աշխատանքների ամփոփում:

Բյուջե

(Խնդրում ենք ներկայացնել մանրամասն բյուջե՝ առանձին տողերով՝ ըստ դասակարգումների)

Միավոր	Միավորի համար	Միավորի գին	ՀԵԲԱ-ից պահանջվող գումար	Ներդրման գումար	Ընդհանուր
1.Աշխատակազմ (ծրագրի աշխատակազմ աշխատավարձ և փորձագետների հոնորարներ՝ ներառյալ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված հարկերն ու պարտադիր վճարները)					
Ծրագրի ղեկավար	Անձ/ամիս	80.000/3	240.000	0	240.000
Ծրագրի հաշվապահ	Անձ/ամիս	40000/3	120.000	0	120.000
Համակարգող	Անձ/ամիս	30000/3	90.000	0	90.000
Բժիշկ փորձագետ	Ժամ/սեմինար	8000/6	48.000	0	48.000
Իրավաբան փորձագետ	Ժամ/սեմինար	8000/6	48000	0	48000
Սոցիոլոգ	Անձ/հատ	10.000/3	30.000	0	30.000

			576.000	0	576.000
Ընդամենը					
2. Գրասենյակային պարագաներ					
Աղմինիստրատիվ ծախսեր (ինտերնետ, կոմունալ)	ամիս	5000/3	0	15.000	15.000
Համակարգիչ (վարձակալում)	հատ	30.000/3	0	90.000	90.000
Գրասենյակային պիտույքներ	ամիս	2000/3	0	6000	6000
Լուսանկարչական ապարատ	հատ	10.000/3	0	30.000	30.000
Կամավորների աշխատավարձ	անձ	5000/2	0	10.000	10.000
Հարցաթերթիկների պատրաստում	հատ	300/20	0	6.000	6.000
Ընդամենը			0	157.000	157.000
5.Այլ ուղղակի ծախսեր					
Հոռուստաթերթների պատրաստում , հեռարձակում ՄԻԳ հեռուստառադիոընկերության կողմից(<<Ձայն քազմաց>>,<<Շնորհանդես-կլոր սեղան>>,<<Հեռուստաբանավեճ >>)	րոպե	4000/180	240.000	480.000	720.000
Մոնթորինգ հիվանդանոցային բաժանմունքում(լրագրող և օպերատոր)2 անգամ ծննդօգնության , 2 անգամ մանկական բաժանմունքներում	անգամ	4/10.000	40.000		40.000

Մեմբերների լուսաբանում (բովանդակակից յուրաքանչյուրը 10 րոպե)	անգամ	4/15.000	30.000	30.000	60.000
Մուրճի ընդմիջում(թեյ կամ սուրճ, հյութ, թխվածք, միանգամյա օգտագործման սպասք, ջուր	անձ/անգամ/ս եմինար	790/20/4	63.200	0	63.200
Գրենական պիտույքներ (բլոկնոտ, գրիչ)	Կոմպլեկտ/ան ձ	300/80	0	24.000	24.000
Ընդամենը			373.200	534.000.	907.200
ԸՆԴԱՄԵՆԸ			949.200	691.000	1.640.200
6. Ընդհանուր ուղղակի ծախսեր (տողեր 1-5)					
Ընդամենը			949.200	691.000	1.640.200

Այլ տեղեկատվություն

Այլ կազմակերպություններ, որոնց ներկայացրել եք սույն ծրագիրը և ձեր դիմումի կարգավիճակը

չկա

Ծրագրի առաջարկը պետք է ստորագրված լինի ՔՀԿ-ի ղեկավարի կամ ծրագրի ղեկավարի կողմից և կնքված լինի ՔՀԿ-ի կնիքով:

Դրամաշնորհային հայտին կից ներկայացվելիք փաստաթղթերի ցանկ

1. ՔՀԿ (ների) և ՋԼՄ-ների կանոնադրության պատճենը.
2. ՔՀԿ (ների) և ՋԼՄ-ների պետական գրանցման վկայականի պատճենը՝ ներառյալ բոլոր ներդիրների պատճենները.
3. ՀԵԻՍ կողմից կազմակերպված հակակոռուպցիոն ուսուցումների մասնակցության վկայականի պատճենը.
4. հարկ վճարողների հաշվառման համարի (ՀՎՀՀ) պատճենը.
5. բանկային հաշվեհամարի վերաբերյալ տեղեկություն (հաղթող ճանաչված հայտատուները պետք է ներկայացնել նաև քաղվածք բանկից).
6. ծրագրի հիմնական աշխատակազմի ինքնակենսագրականները,
7. եթե ծրագրի ղեկավարը ՔՀԿ-ի ղեկավարը չէ, ապա ՔՀԿ ղեկավարի կողմից ծրագրի ղեկավարին տրված լիազորագիրը.
8. Պարտավորագիր-նամակներ՝ համատեղ ներկայացվելիք ծրագրերի դեպքում: